FACTOR.AM-Ի ԹՎԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

FACTOR TV 2026

RA, Yerevan, 12 Saryan str.
E-mail: info@factor.am
Web: www.factor.am
© All Rights Reserved

ՀԱՎԵԼՎԱԾ՝ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2

Factor am-ի կողմից ընդունված կիբեռանվտանգության և տեղեկատվական անվտանգության քաղաքականության նպատակն է աշխատակազմի համար հստակ սահմանել տվյալների անվտանգության և ընկերությանը պատկանող թվային տեխնիկայի ու ծրագրային ապահովման օգտագործման պայմանները: Այս քաղաքականությունը պետք է օգնի աշխատակազմին՝ թե՛ տվյալների, թե՛ ծրագրային ապահովման և թե՛ թվային տեխնիկայի անվտանգությունը պահպանելու հարցերում:

- Factor.am-ի վերահսկողության տակ գտնվող բոլոր օգտահաշիվների ստեղծման համար պետք է հիմք հանդիսանա ղեկավարության կողմից տրված համապատասխան ցուցումը՝ տվյալ համակարգչի, ցանցի կամ տեխնիկական սարքի անվտանգության ադմինիստրատորին, որում սահմանված կլինի, թե կոնկրետ ինչ մակարդակի հասանելիություն պետք է տվյալ օգտահաշիվն ունենա այս կամ այն տեղեկատվական ռեսուրսին:
- Factor.am տեղեկատվական համակարգերում ընդհանուր օգտահաշիվներ չեն թույլատրվում:
- Factor.am-ում կիրառվող գաղտնաբառերը պետք է համապատասխանեն հետևյալ պայմաններին.
    - ✓ Յուրաքանչյուր օգտատեր ինքն է ստեղծում իր գաղտնաբառը, բացառությամբ այն դեպքերի, երբ ադմինիստրատորը ավտոմատացված եղանակով ժամանակավոր գաղտնաբառ է ստեղծում և տալիս օգտատիրոջը՝ առաջին իսկ մուտքից հետո այն փոխելու պայմանով:
    - ✓ Գաղտնաբառերը չպետք է հեշտությամբ կապվեն հաշվի սեփականատիրոջ հետ, ինչպիսիք են՝ օգտանունը, մականունը, ծննդյան ամսաթիվը, մյուսներին հայտնի անձնական այլ տվյալներ և այլն:
    - ✓ Միևնույն գաղտնաբառը չպետք է օգտագործվի բազմաթիվ հաշիվների համար:
    - ✓ Գաղտնաբառերը չպետք է փոխանցվեն բաց հեռախոսակապով (այդ թվում SMS-ով):
    - ✓ Եթե հաշվի անվտանգությունը հարցականի տակ է, գաղտնաբառը պետք է անհապաղ փոխվի: Այն դեպքում, երբ պարզվի, որ տեղի է ունեցել գաղտնաբառի արտահոսք, անհրաժեշտ է արտահոսքի մասին տեղեկացնել Factor.am-ի տնօրենին:
- Կազմակերպությունները կամ աշխատակիցները, որոնք ցանկանում են կիրառել Factor.am-ի ցանցին միանալու համար Remote Access լուծումներ (TeamViewer, AnyDesk և այլն), պետք է նախնական հաստատում ստանան SS բաժնից:
- Կորպորատիվ էլ-փոստի համակարգում առկա բոլոր էլ-նամակները, ֆայլերը և փաստաթղթերը, ներառյալ անձնական տվյալներ, պարունակողները, պատկանում են Factor.am-ին:
- Արգելվում է էլեկտրոնային փոստի օգտագործումը անձնական նպատակներով:
- Էլեկտրոնային փոստի օգտատերերը պետք է միշտ հիշեն, որ կորպորատիվ փոստի օգտագործումը նշանակում է, որ իրենք ինչ-որ առումով հանդես են գալիս Factor.am-ի անունից, իսկ դա նշանակում է, որ պետք է խուսափեն կորպորատիվ փոստով կարծիքներ, գնահատականներ հնչեցնելիս, եթե դա անելու համար պատշաճ լիազորված չեն ընկերության ղեկավարության կողմից:
- Թվային ակտիվների (սոցցանցային էջեր, ալիքներ, կայք, աշխատանքային համակարգիչներ, հեռախոսներ, ցանցային և անվտանգության սարքավորումներ) հետ տեղի ունեցող ցանկացած տարօրինակ, անսովոր միջադեպի դեպքում այն առաջինը հայտնաբերած աշխատակիցը պարտավոր է այդ մասին տեղեկացնել Factor.am-ի տնօրենին: